

նին մէջ է «հովուաց դաշտը» ուր շինուած է «հովուանոցը» և հոս էր որ հրեշտակները հովիւներուն աւետեցին Յիսուսի ծնունդը: Պատմիչները կը վկայեն թէ շատ հին ժամանակները այս տեղւոյն վրայ շինուած էր փառաւոր եկեղեցի մը Ս. Հեղինէ թագուհիին կողմէ: Ըստ Նիկոփորի վկայութեան, այս եկեղեցիին մէջ կը գտնուին երեք հովիւներու գերեզմանները, ինչպէս 670 ին տեսած է Արգուլֆ եպիսկոպոս իր ուղևորութեան առթիւ: Այս նուիրական տեղը կը յարգեն ոչ միայն քրիստոնեաները այլ և մահմետականները կանթեղ կը վառեն, խունկ կը ծխեն:

Հովուանոցի եկեղեցին որ կը գտնուէր ընդարձակ դաշտի մը կեդրոնը, որրանաձև է և այրի մէջ փորուած. եկեղեցիին արևմտեան կողմը, իրարմէ փոքր անջատու մով երկու մարմարեայ սիւներու տակ կը գտնուէր երեք հովիւներուն գերեզմանը: Այս եկեղեցիին վրայ ի հնուսն կառուցուած էր ուրիշ եկեղեցի մըն ալ որուն աւերակները տակաւին կ'երեւին. կար նաև կիներու յատուկ վանք մը\*):

Ըստ աւանդութեան, Ծննդեան ճրագալոյցի պաշտամունքը «հովուանոցի» եկեղեցիին մէջ կը կատար-

---

(\*) «Նոյն վանքին քարեր մինչեւ հիմա կը տեսնուին. Սարակի-նոսները ուղեցին այլուր փոխադրել զանոնք, բայց չի կրցան, վասնզի սոյոյգ է որ երբ անոնք կ'ուզէին ընել տսիկա, այնպէս ծանրացած կ'ըլլային որ չէին կրնար շարժել զանոնք ոչ գրաստներու միջոցաւ եւ ոչ ալ մարզու օգնութեամբ: Նոյն տեղւոյն լեռան գառիվայրին վրայ կային շատ քարեր զոր կրնային փոխադրել ո՛ր եւ է նամբով, բայց անոնք այնչափ կը ծանրանային որ կը ստիպուէին հանապարհին վրայ թողուլ, վասն զի տարակոյս չկայ թէ եթէ կարենային շարժել, հարիւր տարի առաջ կրնային փոխադրել: Այս տեղը նուիրականացած էր հին ժամանակներէ սկսեալ, երբ հոն կը բնակէին սուրբ մարդեր» (P. T. S. Հատ. Ը. մասն Բ. էջ 571-572):